

**SEIU-Ի ՀԱՃԱԽԱԿԻ ՏՐՎՈՂ ՀԱՐՑԵՐ՝ COVID-19-Ի ՊԱՏՎԱՍՏԱՆՅՈՒԹԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

**Անվտանգություն և արդյունավետություն**

**Ի՞նչ է պարունակում պատվաստանյութը: Ինչպե՞ս է այն աշխատում:**

Գոյություն ունեն երկու պատվաստանյութեր, որոնք առկա են կամ կարող են շուտով հասանելի լինել, և երկուսն էլ օգտագործում են սուրհանդակային ՌՆԹ-ի (mRNA) տեխնոլոգիան: Ի տարբերություն այլ պատվաստանյութերի, mRNA տեխնոլոգիան չի օգտագործում որևէ կենդանի վիրուսի մասնիկներ: Դուք չեք ենթարկվի COVID-19 առաջացնող վիրուսի ազդեցությանը:

Փոխարենը, պատվաստանյութերը հրահանգներ են պարունակում Ձեր բջիջների համար: Սուրհանդակային ՌՆԹ-ն՝ գենետիկ կոդի մի կտորը, Ձեր բջիջներին հայտնում է, որ իրենք ստեղծեն COVID-19-ի փշանման սպիտակուց: Երբ բջիջներն արտադրեն փշանման սպիտակուց, իմունային համակարգը կստեղծի հակամարմիններ, որոնք կպայքարեն COVID-19-ի դեմ և կպաշտպանեն Ձեզ այս վիրուսով հիվանդանալուց՝ ապահովելով իմունիտետի զգալի մակարդակ:

Արդյունավետ լինելու համար երկու պատվաստանյութերն էլ պետք է ստանալ երկու անգամ՝ մի քանի շաբաթվա տարբերությամբ:

**Հնարավո՞ր է, որ պատվաստանյութից վարակվեմ COVID-19-ով:**

Ո՛չ: Պատվաստանյութը կենդանի վիրուսի մասնիկներ չի պարունակում: Չնայած ներարկումից կարող եք զգալ աննշան, ժամանակավոր կողմնակի հետևանքներ, այդուհանդերձ, պատվաստանյութից վիրուսով վարակվելն անհնար է:

**Արդյո՞ք պատվաստանյութը կողմնակի հետևանքներ կառաջացնի: Եթե այո, ապա որքա՞ն ժամանակ կարող են դրանք տևել:**

COVID-19-ի պատվաստանյութ ստացող որոշ մարդիկ կողմնակի հետևանքներ կզգան, հատկապես երկրորդ դեղաչափից հետո: Պատվաստանյութի կողմնակի ազդեցությունները լինում են աննշան և ժամանակավոր: Մասնակիցները հայտնել են ներարկման կողմում ցավի, հոգնածության և երբեմն ջերմության, գլխացավի կամ

ցավոտ մկանների և հոդերի մասին: Այս կողմնակի ազդեցությունները վերանում են 1-2 օրվա ընթացքում:

Այս կողմնակի ազդեցությունները իրականում տարածված են բոլոր պատվաստանյութերի շրջանում. դրանք նշանակում են, որ պատվաստանյութն ազդում է և առաջացնում է իմունային պատասխան:

Եթե ինչ-որ մեկի մոտ պատվաստանյութից բացասական ազդեցություն լինի, ապա դա, ամենայն հավանականությամբ, տեղի կունենա պատվաստումից հետո առաջին վեց շաբաթվա ընթացքում:

### **Կա՞ն արդյոք երկարաժամկետ կողմնակի ազդեցություններ:**

COVID-19 պատվաստանյութերը դեռ փորձարկվում են երկարաժամկետ կողմնակի ազդեցությունների հայտնաբերման համար: Այս պահին անվտանգության երկարաժամկետ խնդիրներ չեն հայտնաբերվել: Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման կենտրոնը (CDC) և Մանրամթերքի և դեղերի վարչությունը (FDA) մանրագնին վերահսկողություն են իրականացնում: Քանի որ ավելի շատ մարդիկ են պատվաստվում, առաջիկա շաբաթներին և ամիսներին ավելի շատ տեղեկատվություն հասանելի կլինի: CDC գիտնականները և բժշկական մասնագետները շարունակաբար կվերանայեն պատվաստանյութերի անվտանգությունը: Նրանք կշարունակեն տեղեկատվություն տրամադրել հասարակությանը և անհրաժեշտության դեպքում միջոցներ կձեռնարկեն անվտանգության նոր խնդիրների վերաբերյալ:

Չնայած մենք դեռ ուսումնասիրում ենք COVID-19 պատվաստանյութերը, մենք հաստատ գիտենք հետևյալը՝ COVID-19-ով հիվանդանալը վտանգավոր է: Մենք գիտենք, որ COVID-19-ը կարող է երկարատև առողջական խնդիրներ առաջացնել, նույնիսկ մեղմ դեպքերում: Անհավանական է, որ հայտնաբերենք պատվաստանյութերի հետ կապված այնպիսի կողմնակի ազդեցություններ, որոնք ավելի ռիսկային են, քան իրականում COVID-19-ով հիվանդանալը:

### **Պատվաստանյութը ստանալուց հետո արդյո՞ք ինչ-որ մեկը մահացել կամ հիվանդացել է:**

Ո՛չ: Կան երկու պատվաստանյութեր. մեկը Pfizer-ից է, իսկ մյուսը՝ Moderna-ից: Գրեթե 73,000 մարդ մասնակցել է երկու պատվաստանյութերի կլինիկական փորձարկումներին: Մահացության դեպքեր չեն եղել, և պատվաստումից հետո ոչ ոք չի հաղորդել ծանր հիվանդության մասին:

## **Որքանո՞վ է արդյունավետ պատվաստանյութը:**

Երկու պատվաստանյութերն էլ արդյունավետության շատ բարձր մակարդակ ունեն. Pfizer-ն ունի արդյունավետության 95 տոկոս, իսկ Moderna-ն՝ 94 տոկոս: Դա նշանակում է, որ պատվաստանյութեր ստացած մարդկանց շրջանում 94-ից 95 տոկոսով ավելի քիչ է եղել COVID-19-ով հիվանդանալու դեպքերը, քան նրանց մոտ, ովքեր չեն ստացել այն:

Չնայած դժվար է համեմատել տարբեր հիվանդությունների համար պատվաստանյութերը, սակայն, համեմատելու համար՝ գրիպի դեմ պատվաստանյութերի արդյունավետությունը յուրաքանչյուր տարի ընդամենը 40-60% է: COVID-19-ի պատվաստանյութի արդյունավետության բարձր մակարդակը նշանակում է, որ այն հիվանդության տարածումը կանխելու զգալի ներուժ ունի:

## **Արդյո՞ք մի պատվաստանյութն ավելի լավ է, քան մյուսը:**

Ո՛չ: Երկու պատվաստանյութերն օգտագործում են նույն mRNA տեխնոլոգիան և ունեն արդյունավետության նմանատիպ մակարդակ: Պատվաստանյութեր ստացած մարդկանց շրջանում COVID-19-ով հիվանդանալու 94-ից 95 տոկոսով պակաս դեպքեր են գրանցվել, քան այն չստացածների շրջանում: Արդյունավետ լինելու համար երկու պատվաստանյութերն էլ պահանջում են երկու ներարկում՝ մի քանի շաբաթվա տարբերությամբ:

Ձեր գործատուն կարող է կիրառել երկու լիազորված պատվաստանյութերից մեկը՝ կախված դրանց մատակարարումից: Առաջին չափաբաժինը ստանալուց հետո Դուք չէք կարող երկրորդի դեպքում տարբեր պատվաստանյութ ստանալ:

## **Քանի՞ չափաբաժին է անհրաժեշտ, որպեսզի լիովին պաշտպանված լինեմ: Արդյո՞ք մեկը բավարար է:**

Արդյունավետ լինելու համար երկու պատվաստանյութերն էլ պահանջում են երկու ներարկում՝ մի քանի շաբաթվա տարբերությամբ: Պատվաստանյութի երկրորդ չափաբաժինն բնորոշ է ավելի զգալի, երկարաժամկետ խթան տալը: Երկու չափաբաժնով պատվաստանյութ տալն ընդունված է մանկական շատ պատվաստանյութերի համար: Առաջինը պատրաստում է իմունային համակարգը՝ օգնելով նրան ճանաչել վիրուսը, իսկ երկրորդն ուժեղացնում է իմունային պատասխանը: Pfizer-ի երկրորդ ներարկումը տրվում է առաջինից 21 օր անց, իսկ Moderna-ինը՝ 28 օր անց:

## **Կարո՞ղ եմ արդյոք խառնել և համապատասխանեցնել պատվաստանյութերը:**

Ո՛չ: Երկու չափաբաժին պատվաստանյութի համար Ձեր երկրորդ չափաբաժինը պետք է լինի նույն պատվաստանյութից, ինչ առաջինը: Քանի որ պատվաստանյութերը

տարբերվում են՝ ըստ կազմի, պահպանման և երկու դեղաչափերի միջև ժամանակի, փորձագետներն ասում են, որ մարդիկ պետք է ընդունեն նույն պատվաստանյութը՝ երկու չափաբաժնով:

### **Որքա՞ն ժամանակ է տևում պաշտպանությունը: Անհրաժեշտ կլինի՞ արդյոք ամեն տարի խթանիչ ներարկում ստանալ:**

Հնարավոր է, որ խթանիչ ներարկման կարիք լինի: Քանի որ հիվանդությունը նոր է, մենք դեռ ավելի շատ պետք է ուսումնասիրենք, թե որքան ժամանակ կարող է տևել վարակի դեմ իմունիտետը: Ժամանակի ընթացքում պաշտպանությունը կարող է թուլանալ, և հնարավոր է, որ կրկին զգայուն լինեք: Հնարավոր է նաև, որ վիրուսը մուտացիայի ենթարկվի: Հանրային առողջապահության մասնագետներն ու գիտնականները կշարունակեն ուսումնասիրել վիրուսը և վերահսկել մարդկանց իմունիտետը և հետագայում համապատասխան հրահանգներ տրամադրել:

### **Հնարավո՞ր է, այնուամենայնիվ, վարակվել վիրուսով, նույնիսկ եթե պատվաստանյութ ստանամ:**

Այո՛: Մովորաբար պատվաստումից հետո մարմինը իմունիտետ է ձեռք բերում մի քանի շաբաթվա ընթացքում: Դա նշանակում է, որ հնարավոր է, որ մարդը վարակվի COVID-19-ի վիրուսով՝ պատվաստումից անմիջապես առաջ կամ անմիջապես հետո, և հիվանդանա: Դա պայմանավորված է նրանով, որ պատվաստանյութը չի ունեցել բավարար ժամանակ՝ պաշտպանություն ապահովելու համար:

Չնայած պատվաստանյութը զգալի պաշտպանություն է ապահովում, սակայն այն 100% արդյունավետ չէ: Մի փոքր հավանականություն կա, որ Դուք դեռ կարող եք վարակվել, բայց դա, ամենայն հավանականությամբ, կլինի վիրուսի մեղմ դեպք, ի տարբերություն ծանր դեպքի, որը հնարավոր է առանց պատվաստանյութի: Առանց պաշտպանության վիրուսով վարակվելը կարող է հանգեցնել մահացու հետևանքների, իսկ պատվաստանյութը ընդունելու դեպքում՝ ոչ:

### **Նույնիսկ պատվաստանյութը ստանալուց հետո կարո՞ղ եմ արդյոք վարակակիր լինել:**

Մենք դեռ չգիտենք՝ արդյո՞ք պատվաստանյութ ստացած անձինք կարող են վարակել մյուսներին, ովքեր պատվաստանյութ չեն ստացել: Այդ պատճառով՝ չափազանց կարևոր է, որ բոլորը շարունակեն դիմակներ կրել, սոցիալական հեռավորություն պահպանել և հետևել բոլոր անհրաժեշտ առողջապահական ընթացակարգերին, ինչպես աշխատանքի վայրում, այնպես էլ՝ այլուր:

### **Արդյո՞ք պատվաստանյութն ավելի լավ է գործում՝ կախված տարիքից, քաշից կամ ռասայից:**

Առկա տվյալների հիման վրա մենք գիտենք, որ Pfizer պատվաստանյութը լավ է գործում՝ անկախ տարիքից, քաշից և ռասայից: Ակնկալվում է, որ Moderna պատվաստանյութի

վերաբերյալ տվյալները շուտով կիրառարակվեն, և մենք ակնկալում ենք, որ այն նույնպես ցույց կտա նման արդյունքներ: Երկու պատվաստանյութերի փորձարկումներն ընդգրկել են ավելի քան 25,000 մարդ այն համայնքներից, որոնց վրա առավելապես ազդել է COVID-19-ը, ներառյալ՝ սևամորթները, լատինական ծագման և տարեց անձինք:

### **Ես ունեմ ուղեկցող հիվանդություններ: Արդյո՞ք պատվաստանյութի ընդունումը վնասակար ազդեցություն կունենա:**

Մենք դեռ հստակ չգիտենք, թե ուղեկցող հիվանդություններ ունեցող անձինք ինչպես կարձագանքեն պատվաստանյութին: Հասկանալի է, սակայն, որ առողջության հետ կապված այլ բարդություններ ունեցողներն ավելի մեծ վտանգի տակ են գտնվում՝ հիվանդության ծանր դեպքերով վարակման համար: Եթե ունեք ուղեկցող հիվանդություն, պետք է խորհրդակցեք Ձեր բժշկի հետ, թե ինչն է Ձեզ համար ամենալավ տարբերակը:

### **Ես արդեն վարակվել եմ COVID-19-ով. արդյո՞ք դեռ պատվաստանյութի կարիք ունեմ:**

Ներկայումս բավարար տեղեկատվություն չկա, որպեսզի ասենք՝ արդյո՞ք վարակվելուց հետո կամ որքան ժամանակ հետո անձը կրկին պաշտպանված կլինի COVID-19-ից: Վաղ փաստերը ենթադրում են, որ COVID-19-ի դեմ բնական իմունիտետը կարող է շատ երկար չտևել, սակայն ավելի լավ հասկանալու համար անհրաժեշտ են ավելի շատ ուսումնասիրություններ: CDC-ն դեռ խորհուրդներ չի տվել այն մասին, թե արդյոք COVID-19-ով վարակված մարդիկ պետք է ստանան պատվաստանյութ:

### **Արդյո՞ք նույնիսկ պատվաստանյութ ստանալուց հետո դեռ պետք է կրեմ անձնական պաշտպանության հարմարանք և պահպանեմ հանրային առողջության ընթացակարգերը:<sup>1</sup>**

Այո՛: Մենք դեռ պետք է դիմակներ կրենք և ֆիզիկական հեռավորություն պահպանենք, մինչև բնակչության մեծ մասը պատվաստվի, և վստահ լինենք, որ պատվաստանյութը երկարաժամկետ պաշտպանություն է ապահովում: Սկզբնապես մենք այնքան պատվաստանյութ չենք ունենա բոլոր ցանկացողներին պատվաստելու համար, և վիրուսը դեռ փոխանցվելու է:

Չնայած պատվաստանյութը զգալի պաշտպանություն է ապահովում, այնուամենայնիվ, այն 100% արդյունավետ չէ: Մենք չգիտենք նաև, թե պատվաստված անձինք դեռ կարո՞ղ են վիրուսակիր լինել և վարակել այն մարդկանց, ովքեր չեն պատվաստվել: Յուրաքանչյուր ոք պետք է շարունակի օգտագործել անձնական պաշտպանության հարմարանք և հետևի հանրային առողջության պահպանման ընթացակարգերին, ինչպես աշխատանքի վայրում, այնպես էլ՝ այլուր:

<sup>1</sup> Շնորհակալություն SEIU 1199UHE-ին՝ այս փաստաթղթի կը մշակելու համար՝ սերտ խորհրդակցելով բժիշկների և այլ բժշկական մասնագետների հետ:

## Մշակման և հաստատման գործընթաց

**Պատվաստանյութերը շատ արագ են պատրաստվել: Ինչպե՞ս կարող են իմանալ, որ այն անվտանգ է, և շտապելու արդյունք չէ:**

Pfizer-ի և Moderna-ի կողմից արտադրված mRNA պատվաստանյութերն ավելի արագ են մշակվել, քանի որ դրանք չեն օգտագործել կենդանի վիրուսի մասնիկներ: Փոխարենը, mRNA-ն հեշտ է պատրաստել լաբորատորիայում՝ մի քանի տարի խնայելով զարգացման համար:

Այս պատվաստանյութերը մանրակրկիտ ուսումնասիրվում, փորձարկվում և կարգավորվում են մինչ դրանց օգտագործումը: Պատվաստանյութերը ստեղծած ընկերությունները ծավալուն դիմումներ են ներկայացնում բազմաթիվ պետական գերատեսչությունների և գիտական փորձագետների անկախ մարմիններին, որոնք թույլ կտան օգտագործել պատվաստանյութը միայն այն դեպքում, եթե ապացույցները ցույց տան, որ այն անվտանգ է:

**Առողջապահության աշխատակիցները կլինեն առաջինները, ովքեր կարող են պատվաստանյութեր ստանալ: Որքանո՞վ էին փորձարկումները ստույգ: Քանի՞ մարդ էր ներգրավված և որքա՞ն մանրակրկիտ էր ուսումնասիրությունը:**

Pfizer-ի և Moderna-ի պատվաստանյութերի կլինիկական փորձարկումներում պատվաստվել են ավելի քան 73,000 մարդ՝ ԱՄՆ-ից և ամբողջ աշխարհից: Երկու պատվաստանյութերն էլ արդյունավետության շատ բարձր մակարդակ ունեն:

**Pfizer-ի և Moderna-ի պատվաստանյութերի կլինիկական փորձարկումների մեջ արդյո՞ք ներառվել են COVID-19-ից առավելապես տուժած խմբերի մարդիկ, հատկապես՝ սևամորթ, լատինական ծագման և տարեց մարդիկ:**

Այո՛: Չնայած պատվաստանյութերը նույն կերպ են գործում տարբեր ռասաների կամ էթնիկ խմբերի մարդկանց շրջանում, այդուհանդերձ, կարևոր է համոզվել, որ պատվաստանյութերը փորձարկվել են բազմազան խմբերի շրջանում, նախքան դրանց թողարկումը: Pfizer-ի և Moderna-ի կողմից անցկացված կլինիկական փորձարկումներն ընդգրկել են ավելի քան 25,000 մարդու այն համայնքներից, ովքեր առավելապես ազդվել են COVID-19-ից, ներառյալ՝ սևամորթ, լատինական ծագման և տարեց անձինք:

**Արդյո՞ք նախագահ Թրամփը ճնշում է գործադրել պատվաստանյութեր արտադրող ընկերությունների կամ FDA-ի վրա՝ գործընթացն արագացնելու համար:**

Ո՛չ: Հասարակական առողջապահության ղեկավարները, այդ թվում՝ դոկտոր Anthony Fauci-ն, ուշադիր հետևում են պատվաստումների գործընթացին, և այն առաջ է ընթացել՝ առանց նախագահ Թրամփի և Հանրապետականների միջամտության: Պատվաստանյութերը ստեղծած ընկերությունները լայնածավալ դիմումներ են ներկայացնում բազմաթիվ պետական գերատեսչություններին և գիտական

փորձագետների անկախ մարմիններին, որոնք թույլ կտան պատվաստանյութը օգտագործել միայն այն դեպքում, եթե տվյալներն ու ապացույցները ցույց տան, որ այն անվտանգ է մարդկանց համար: Գործընթացը ժամանակային սահմանափակում չունի, և ոչ ոք, նույնիսկ Նախագահը, չի կարող շտապեցնել այն:

### **Ինչպե՞ս է գործում պատվաստանյութի հաստատման գործընթացը:**

Միացյալ Նահանգներում պատվաստանյութերն օգտագործելուց առաջ դրանք պետք է հաստատված լինեն Սննդի և դեղերի վարչության (FDA) կողմից: FDA-ը պատվաստանյութը հաստատելու կամ չհաստատելու իր որոշումը հիմնավորում է կլինիկական փորձարկումների տվյալների վրա: Տվյալները վերանայվում են անկախ փորձագետների կողմից, որոնք կառավարության կամ դեղագործական ընկերությունների մաս չեն կազմում, և FDA-ի աշխատակից գիտնականներն ու բժիշկները, որոնք քաղաքականապես նշանակված չեն և պատվաստանյութերի անվտանգության և արդյունավետության փորձագետներ են:

Գիտնականներն ակնկալում են անսպասելի կողմնակի ազդեցություններ, որոնք կարող է առաջացնել պատվաստանյութը: Սա օգնում է որոշել պատվաստանյութի «անվտանգությունը»: Ընդհանուր առմամբ, որքան քիչ և մեղմ են կողմնակի ազդեցությունները, այնքան պատվաստանյութը համարվում է անվտանգ: Եթե կլինիկական փորձարկման տվյալները ցույց են տալիս արդյունավետության և անվտանգության բավարար ապացույցներ, ապա FDA-ն կհաստատի պատվաստանյութը և կլիցենզավորի այն ԱՄՆ-ում օգտագործելու համար:

### **Ես լսել եմ, որ FDA-ը EUA կարգավիճակ է տալիս Pfizer-ի COVID-19 պատվաստանյութին: Ի՞նչ է նշանակում EUA:**

Երբեմն FDA-ը թույլ է տալիս, որ դեռ ամբողջությամբ չհաստատված բժշկական արտադրանքն օգտագործվի արտակարգ իրավիճակներում՝ յուրջ հիվանդությունն ախտորոշելու, բուժելու կամ կանխելու համար: Սա կոչվում է «արտակարգ իրավիճակների օգտագործման թույլտվություն» կամ անգլերեն հապավումը՝ «EUA»: Արտակարգ օգտագործման թույլտվությունը (EUA) կարող է տրվել, երբ FDA-ը որոշում է, որ ապրանքը «կարող է արդյունավետ լինել» հիվանդության դեմ՝ հիմնվելով առկա բոլոր գիտական ապացույցների վրա: Սա ավելի ցածր ստանդարտ է, քան պահանջվում է ապրանքի լիարժեք հաստատման համար, բայց այն, միևնույն է, օգտագործում է կլինիկական փորձարկումներից հավաքագրված վաղ տվյալներ:

### **Պատվաստանյութերի բաշխում**

**Արդյո՞ք կառավարությունը կամ իմ գործատուն կարող են ինձ կամ այլ առողջապահական աշխատողներին ստիպել պատվաստանյութ ընդունել: Իսկ իմ հիվանդները. արդյո՞ք նրանք ստիպված կլինեն ստանալ այն:**

Ո՛չ, առողջապահական աշխատողների կամ հիվանդների համար պարտադիր չէ պատվաստանյութեր ստանալը: Այնուամենայնիվ, բուժաշխատողներին խրախուսվում է այն ստանալ՝ հաշվի առնելով նրանց հաճախակի շփումը COVID-19-ով վարակված հիվանդների հետ, ինչպես նաև՝ սիրելիներին և հարևաններին պաշտպանելու համար: Չնայած առողջապահության աշխատողներին առաջինն է հնարավորություն տրվելու՝ իրենց աշխատանքի պատճառով, այնուամենայնիվ, ընդհանուր բնակչությունը շուտով իրավունք կստանա օգտվել դրանից: Չանգվածային պատվաստումը COVID-19-ի տարածումը դադարեցնելու, կյանքեր փրկելու և հերթական անգամ բնականոն կյանքը վերսկսելու լավագույն միջոցն է:

### **Արդյո՞ք պատվաստվում ստացածներին կնշանակվի ավելի հաճախ աշխատել COVID-19-ով վարակված հիվանդների հետ:**

Ո՛չ, առողջապահության աշխատողի պատվաստման կարգավիճակը չի ազդի նրա աշխատանքային նշանակման վրա:

### **Արդյո՞ք պատվաստանյութն անվճար է: Արդյո՞ք իմ ապահովագրությունը կծածկի այն:**

Պատվաստանյութի համար ստիպված չեք լինի վճարել: Պատվաստանյութն անվճար է, և Medicare-ը, Medicaid-ը և Private Insurance-ը պայմանավորվել են այն անվճար առաջարկել: Ապահովագրություն չունեցող անձինք, հնարավոր է, հոգան պատվաստանյութի ստացման ծախսերը:

### **Արդյո՞ք ես հնարավորություն կունենամ պատվաստանյութը ստանալ ավելի ուշ, եթե հրաժարվեմ առաջին հնարավորությունից:**

Մենք դեռ չունենք բոլոր մանրամասները, թե քանի չափաբաժին հասանելի կլինի նախնական բաշխման ժամանակ: Պատվաստանյութի սահմանափակ դեղաչափերի պատճառով այն չօգտագործելը, երբ այն հասանելի է առաջին անգամ, կարող է նշանակել, որ ստիպված կլինեք դեռ շատ ամիսներ սպասել, որպեսզի կրկին դրա հնարավորությունն ունենաք: